ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2012- 18.08./279
18.08.2012 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Ա. Միրզոյանին

ՀՀ գլխավոր դատախազ

Ա. Հովսեփյանին

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

(Նարեկ Ափինյանին Վանաձորի ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգելու, նրա նկատմամբ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վարվեցողություն ցուցաբերելու վերաբերյալ)

Իր իրավունքների պաշտպանության հարցով 2012թ. օգոստոսի 18-ին մեր կազմակերպություն է դիմել Վանաձոր քաղաքի Լանջյան 24 հասցեի բնակիչ Նարեկ Արմենակի Ափինյանը:

Ըստ Նարեկ Ափինյանի, 2012թ. օգոստոսի 17-ին ոստիկանության աշխատակիցները իրեն իր աշխատանքի (Պանտեռա գիշերային ակումբ) վայրից երեկոյան ժամը 11:30-ին 12:00-ի սահմաններում բերման են ենթարկել Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզություն:

Նարեկ Ափինյանը պատմում է, որ նրան տարել են ինչ-որ մեկի աշխատասենյակը, որտեղ նստած է եղել ոստիկանության աշխատակից Արամ Ղազարյանը, Երևանից ինչ-որ ոստիկանության աշխատակից, Արտյուշա Հարությունյանը, Գևորգ անունով ինչ-որ թաղային, Սպիտակ քաղաքից ինչ-որ ոստիկան:

Ի սկզբանե ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը Ն. Ափինյանի նկատմամբ եղել է անհարգալից:

Նրան ասել են որ ինքը մասնակից է եղել ինչ-որ ծեծկռտուքի և առաջարկել են, որ բացատրություն գրի տվյալ միջադեպի վերաբերյալ: Տեղյակ չլինելով միջադեպից՝ Ն. Ափինյանը հրաժարվել է և հայտնել է, որ ինքը տեղեկություններ չունի, որից հետ նրա հետ ոստիկանության աշխատակիցները սկսել են հայհոյանքներով և սպառնալիքներով խոսել:

Քանի որ ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը ըստ Ն. Ափինյանի, «անբարոյական» է եղել, նա ցանկացել է իր հեռախոսից զանգահարել, որպեսզի օգտվի փաստաբանի իրավունքից, և փաստաբանը ներկա լինի հարցաքննությանը: Սակայն նրան արգելել են և ստիպել են բացատրություն գրել: Ն. Ափինյանը հրաժարվել է ասելով, որ իր փաստաբանի ներկայությամբ կգրի: Ոստիկանության աշխատակիցները նրան համոզել են,

որ Ն. Ափինյանը դրա իրավունքը չունի և պարտավոր է բացատրություն գրել, հակառակ դեպքում նրան թույլ չեն տա, որ գնա:

Ամբողջ հարցաքնության ընթացքում բաժնում եղած ոստիկանության աշխատակիցները հերթով մտել են աշխատասենյակ և հարցրել՝ «ինչ ա էղել, ոնց ա էղել»: Ն. Ափինյանը պատասխանել է, որ ինքը ոչնչից տեղյակ չէ, իսկ ոստիկանության աշխատակիցները նրան սպառնացել են ասելով՝ «բա պատմի՝ խի՞ ես ստիպում, որ մենք քու հետ վատ վարվենք, երդում կեր, որ չես խաբում»:

Տվյալ ժամանակահատվածում աշխատասենյակ է մտել թաղային Գևորգը, բռնել է Ն. Ափինյանի ձեռքից և ասել, որ «խի ես տղեքին խաբում, գողակա՞ն ես գնում»:

Այդ ամբողջ ընթացքում բաժնի մի շարք աշխատակիցներ մտել են սենյակ և հայհոյանքով ասել, որ «խի ես խաբում տղեքին ճիշտը ասա»:

Ղազարյան Արամը նստած է եղել Ն. Ափինյանի կողքին և անընդհատ մոտավորապես 10 անգամ ձեռքով հարվածել է Ն. Ափինյանի գլխի և պարանոցին:

Նրան ստիպել են, որ երդվի, որ այդ ամենի հետ կապ չունի և սեռական բնույթի հայհոյանքներ են տվել:

Ն. Ափինյանին ասել են՝ «քո վդից երևումա, որ բեսամտ կայֆարիկ ես, մեզ մի խաբի, քֆուր կեր, որ մեզ մի բառ չես խաբել»:

Երևանցի քննիչը նրան ասել է, որ «տաբուրետկեն գլխիդ կջարդեմ և սպառնացել, որ կարողա քեզ «բռնաբարեմ» և հայտնել է, որ նա շատերին է տենց արել, ովքեր իրեն խաբել են, իսկ Արամ Ղազարյանը ասել է կարողա էսա քեզ քաշեմ ոտերիս տակ այ ճիճու»:

Ըստ Ն. Ափինյանի ոստիկանության աշխատակիցները բռնի ձևով ցանկացել են, որ նա ընդունի չկատարած հանցագործությունը:

Ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունները, Ն. Ափինյանի նկատմամբ կիրառված խոշտանգումները, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը տևել է 2012թ. օգոստոսի 17-ի 11:30-ի սահմաններից մինչ 2012թ. օգոստոսի 18-ի 00:05-ը:

Բացատրությունը գրելուց հետո ժամը 00:05-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցները վերցրել են Ն. Ափինյանի բջջային հեռախոսի համարը, որից հետո միայն թողել են, որ նա գնա:

Ըստ Ն. Ափինյանի, նա մինչ այս պահը գտնվում է ծանր սթրեսի մեջ գիշերն ապրած հոգեբանական ճնշումների պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ դիմում եմ Ձեզ քրեական գործ հարուցելու և Ն. Ափինյանին խոշտանգած և հոգեբանական ճնշումների ենթարկած ոստիկանության աշխատակիցներին համապատասխան պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am